Արձանագրություն N 5
<<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/2-Ա>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23.07.2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Ալեյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Մխիթարյանը, Ա. Խաչատրյան:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/2-Ա ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրակարգ՝ Ջրային կոմիտեի կարիքների համար ջրային ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/2-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<ՄԼԼ ԻՆԴԱՍԹՐԻԱԼ>> ՍՊ, <<Արտեզիա>> ՍՊ և <<ՀԻԴՐՈՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ>> ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի (այդ թվում գնահատող հանձնաժողովի 11.07.2019թ. N4 արձանագրությամբ պահանջված և 1-ին տեղ զբաղեցրած ընկերությունների կողմից լրացուցիչ ներկայացված փաստաթղթերի) ուսումնասիրության վերաբերյալ:

Ելույթ ունեցավ գնահատման հանձնաժողովի նախագահ Կ. Ալեյանը և նշեց, որ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրվել են հրավերով պահանջվող որակավորման չափանիշների վերաբերյալ 1-ին տեղ զբաղեցրած ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով մասնակից ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերի /այդ թվում գնահատող հանձնաժողովի 11.07.2019թ. N4 արձանագրությամբ պահանջված և 1-ին տեղ զբաղեցրած ընկերությունների կողմից ներկայացված՝ շտկված փաստաթղթերի/ ուսումնասիրության արդյունքները և գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/2-Ա ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել.
   - 1-ին և 2-րդ չափաբաժիններում՝ <<ՄԼԼ ԻՆԴԱՍԹՐԻԱԼ>> ՍՊԸ-ին,
   - 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններում՝ <<<<Արտեզիա>> ՍՊԸ-ին,
   - 4-րդ չափաբաժնում՝ <<ՀԻԴՐՈՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ>> ՍՊԸ-ին,
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել նշված չափաբաժիններում ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝	_____	Կ. Ալեյան
	_____	Է. Մխիթարյան
Անդամներ	_____	Ա. Խաչատրյան
	_____	Ա. Առուշանյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան